

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՉԱՓԵՐԸ*

Սիրանուշ Մելիքյան

Բանալի բառեր՝ Եկեղեցի, պետություն, կրոն, ծևաչափ, հոգևոր բաղադրիչ, հանրույթ, հոգևոր անվտանգություն, ազգային արժեհամակարգ, պետական ապարատ, արդյունավետ կառավարում:

Պատմական տարբեր ժամանակաշրջանների ընթացքով ու պետական ապարատի ամենատարբեր առանձնահատկություններով պայմանավորված՝ Եկեղեցական ու պետական հարաբերությունները տարաբնույթը ծև ու ընթացք են ունեցել: Աշխարհաքաղաքական ներկայիս իրողությունները սերտորեն կապված են համաշխարհայնացման կամ գլոբալիզացիոն գաղափարախոսությամ հետ, որը սնվում է երեք հիմնական և դրանցից ածանցյալ գաղափարական աղյուրներից: այն է՝ կրոնադավանաբանական, տնտեսական, գաղափարաքաղաքական-մշակութային: Ներկայիս գլոբալիզացվող ցանկացած պետության գերխնդիրը ազգային արժեհամակարգի և նրա հոգևոր բաղադրիչի պահպանումն ու փոխանցումն է: Միևնույն ժամանակ կարող ենք նշել, որ կան հոգևոր-բարոյական արժեքներ, որոնք համընդիմություն են, համամարդկային, ուստի հոգևոր բաղադրիչի արժեգործումը նաև համամարդկային խնդիր է՝ գլոբալ անվտանգության համատեքսուում:

Արդի ռազմաքաղաքական զարգացումների հենքում որպես կարևորագույն գործոններ ընկած են քաղաքակրթական բախումները: Ամերիկացի քաղաքագետ Սամուել Հաստինզունը դեռ 1993թ. առաջադրեց «քաղաքակրթությունների բախսման» զարդարարը: «Պետություններին՝ որպես միջազգային քաղաքականության գլխավոր դերակատարների փոխարիններու էին զայիս քաղաքակրթությունները՝ մշակութային հանրույթներ, որ տարբերվում են պատմությամբ, լեզվով, ավանդույթներով և կրոնով[1]: Հայտնի է նաև, որ հոգևոր-կրոնական բաղադրիչը ցանկացած քաղաքակրթության գլխավոր հատկանիշներից է: Պատահական չէ, որ փորձագիտական շրջանակներում այսօր լայնորեն քննարկվում ու շրջանառվում է այն թեզը, որ 21-րդ դարը ոչ միայն էթնիկական, այլև դավանարանական հակամարտությունների ժամանակաշրջան է: Այս մոտեցումն այսօր աշխարհում փաստվում է մի շարք ակնհայտ իրողություններով: օրինակ՝ Սերձավոր և Միջին Արևելքում ընթացող զարգացումներում կրոնական գործոնն ավելի քան կարևոր դեր է կատարում: Սեզանում հոգևոր անվտանգության իրականացումը պահանջում է Եկեղեցու, պետության, հասարակության ողջ ներուժի օգտագործում: Աղոփականութեած, Եկեղեցի-պետություն փոխարարերության մոդելներն ու ծևերը շատ կարևոր են նաև վերոնշյալ հարցի տեսանկյունից, քանի որ փոխարաբերության ծևերից էլ կարող է կախված լինել գործունեության արդյունավետությունը: Կարող ենք նշել, որ կրոնն իր տեղն ունի ազգային անվտանգության հոգևոր բաղադրիչում, հետևաբար կարսորվում է նաև Եկեղեցու նշանակությունը: Ներկայումս գրեթե բոլոր երկրներում Եկեղեցին անջատ է պետությունից: Սակայն տարբեր երկրներում գործում են Եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորող տարբեր օրենքները: Կան պետություններ, որոնք մի կրոնի տվել են «պետական կրոնի» կարգավի-

* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ճակ՝ առանց արգելելու այլ կրոնների ազատությունը: Հիմնականում բոլոր երկրներն ունեն իրենց պետական կրոնները: Մի շարք պետություններում պետական մտաժողության ու հասարակության գիտակցության համատեքստում եկեղեցիներին տալիս են այսպես կոչված ազգային եկեղեցու կարգավիճակ: Հայ առաքելական եկեղեցին և ունի այդ կարգավիճակը:

Ընդհանուր առնամբ ուսումնասիրելով տարբեր երկրներում եկեղեցի-պետություն փոխահարաբերությունների կարգավորման օրինաչափությունները՝ առանձնացնում ենք 3 հիմնական ծևաչափ:

- *Տարանջատված (երբ եկեղեցին պետությունից գործում է անջատ)*
- *Պետական եկեղեցու ծևաչափ*
- *Համագործակցության ծևաչափ[2]*

Առանձնացնում ենք նաև Աստվածապետություն կամ պետության կառավարման թեոկրատական մոդելը: Թեոկրատական է այն հասարակությունը, որտեղ հասարակական և քաղաքական կյանքը կարգավորվում է կրոնական դոգմաներից բխող միասնական նորմերի միջոցով: Հայաստանում, փաստորեն, մեկուկես հազարամյակ իշխել է թեոկրատական գաղափարը: Հայ հասարակությունն իրեն դիտարկել է որպես կրոնական համայնք, քաղաքական ասպարեզում աստվածապետական իշխանությունը գերադասել աշխարհիկ իշխանությունից, կրոնական արժեքները աշխարհիկ-քաղաքական արժեքներից[4]: Եկեղեցի-պետություն հարաբերությունների հարց գոյություն չի ունեցել աստվածապետական (թեոկրատական, *theocratiique*) համակարգով կառավարվող երկրներում, քանի որ աստվածապետական համակարգում իշխանությունը լինում է միանձնյա, և միապետն իր աստվածային ծագմանը հավակնելով՝ իր անձի մեջ է միաձուլում քաղաքական ու եկեղեցական գոյց իշխանությունները[5]: Կա մի պետություն է՝ Լիբանանը, որը որդեգրել է քազմահամայնքային համակարգը և երկիրը վերածել համայնքների համընկերակցությամ: Այս բոլոր տարբերակները ենթադրում են շեղում պետության գերիշխանության (անբաժանելիության կամ անտրոելիության և անկիխանցելիության կամ անօտարելիության սկզբունքներից, քանի որ գերիշխան պետությունը իրեն է վերապահում իր վեհապետական իրավասությունները և որանք կամ դրանց մի մասը ուրիշների չի գիծում, հասարակական խմբերի կամ կրոնական համայնքների չի փոխանցում: Պետության գերիշխանության անբաժանելիության և անփոխանցելիության հաստատ սկզբունքների դիտանյունից՝ Լիբանանի որդեգրած քազմահամայնքային համակարգը միակն է, որը համայնքներին շնորհել է ոչ միայն կրոնա-կենցաղային ինքնակարություն, այլ նաև քաղաքական իրավունքներ: Ցուրաքանչյուր, պատմականե համայնքի վերապահված են պետական պաշտոնների, պատգամավորական տեղերի և նախարարական թղթապանակների հասուն մասնաբաժններ՝ քվուտաներ: Այս պատճառով է նաև, որ լիբանանահայությունը տարագիր հայության հայապահպաննան պայքարի միջնաբերդն է, քանի որ Արևմուտքը ծանոթ չէ նման մի համակարգի. արևմտյան երկրներում հայ համայնքները ճանաչված չեն իրենց նուրույն համայնք կամ ազգային փոքրամասնություն:

Եկեղեցի-պետություն հարաբերությունների տարանջատված ծևաչափ:

Քննարկենք վերոնշյալ ծևաչափերից եկեղեցի-պետություն փոխարաբերությունների տարանջատված ծևաչափը: Այս ծևաչափի շրջանակներում ավելի շատ կրոնական ազատությունը նշանակում է ավելի շատ հեռավորություն պետության և կրոնի միջև, քանի որ այդ մեծ հեռավորության առկայության դեպքում եկեղեցիները կարող են զարգանալ առանց արգելքների: Միայն նման ծևով կրոնները կարող են կատարել ա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

գործվել ավելի մաքուր ձևով, ձևավորել և իրականացնել իրենց կանոնները: Որոնք են ի վերջո այս մոդելի առավելություններն ու թերությունները: Առավելություններն այն են նրանում, որ ապահովում են ամեաշատ հնարար պարզություն և ազատություն կրոնական հասարակության և խմբավորումների համար: Եթե նույնիսկ այս առանձնացման և հեռավորության խիստ մոդելը մնում է գրավիչ, ապա ակնհայտ է, որ այն տեղի է ունենում պատմական համատեսրություն, որտեղ առկա են լուրջ կրոնական հակասություններ կամ այն բանի վտանգը, որ կրոնը առաջնահերթություն ունի պետության նկատմամբ: Նման իրական կամ ֆիկտիվ ֆոնի վրա ամենաշատ հնարավոր հեռավորության կայունացման գործողությունները կարելի է համարել խելամիտ[5]:

ՊԵՏՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾՆԱՅԱԿԻ

Կրոնական կազմակերպությունների հետ հարաբերությունների ոլորտում պետական քաղաքականության կողմից նախապատվություն ծնորք բերած ուղղություններից է տվյալ երկրի համար պետական կրոնի կամ ավանդական եկեղեցու կարգավիճակի օրենսդրական ամրագրումը եւ վերջինիս աջակցության ցուցաբերումը՝ առանց սահմանափակելու մյուսների սահմանադրական իրավումները: Նման պրակտիկան թույլ է տալիս պետությանը բնակչության հոգևոր ու մշակութային դաստիարակության, ազգային-մշակութային ավանդույթների զարգացման, բարոյականության և, որպես արդյունք՝ իրավական մշակույթի բարձրացման, բարոյականական եւ հայրենասիրական կրթության եւ այլնի կազմակերպման ասպարեզներում հենվել ավանդական կրոնական կազմակերպությունների վրա: Ինչպես ցույց է տալիս արտերկրյա փորձի ուսումնասիրությունը, գոյություն ունեն պետական կրոնի կամ ավանդական կրոնական կազմակերպության կարգավիճակներ, որոնք միմյանցից որոշակիորեն տարրերվում են: Այսպես, պետական կրոնի առանձնահաստուկ հայտանիշներ են համարվում նրա բոլոր ծախսերի պետական ֆինանսավորում, եկեղեցու գործերի վարույթի իրականացումը պետական պաշտոնյաների կողմից, պետական գործերին հաղորդակից լինելու բացառիկ իրավունքը և այլն: Կարևոր ենք համարում ասել, որ հենց այսպիսի կարգավիճակ ունեն Նորվեգիայի եկեղեցին, Դանիայի եկեղեցին, Անգլիական եկեղեցին: Ընդ որում, ոչ ոք նշյալ երկրներին չի համարում, կրոնական, սուսալիտար կամ կղերական պետություն, ոչ էլ նրանց պարսակում ազգային-կրոնական խորականության մեջ[6]:

ՊԵՏՈՎԱՐՈՒ-ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿցԱՅԻՆ ԾՆԱՅԱԿԻ

Այս ծնաչակի լայնորեն գործում է նաև պետական եկեղեցու ծնաչակի համատեքստում: Այլ տեսանկյունից, այն կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ: Այս ծնաչակի պատճենը առաջին պլան է մովում ոչ թե ազատության ապահովումը հեռավորության միջոցով, այլ իրավահավասար երաշխիքը: Այս ծնաչակի հարցը ոչ այնքան պետության և կրոնի հեռավորության կամ մտերմության մեջ է, որքան հակառակը որոշումը պետք է ընդունվի գիխավոր արժեքի շրջանակներում՝ իրավահավասար: Այստեղ հարց է առաջանում. արդյոք պետք է, որ եկեղեցու և պետության միջև լինի իրավահավասարություն, լինի դա նյութական, թե պաշտոնական: Իրավահավասարության այս ծնաչակի էլույթունը այն է, որ ցանկացած կրոնական խմբավորում պետության համար նույն արժեքն է ներկայացնում, իրավահավասար է, սակայն միևնույն ժամանակ նույն չափով անտարբեր է անկախ այն հանգամանքից այդ խմբավորումները մեծ են, թե փոքր[7]: Այստեղ շատ կարևոր է անդրադառնալ կրոնական խմբավորումների ֆինանսական աջակցությանը: Եթե, որտեղ և ում կողմից պետք է ֆինանսավորվեն կրոնական խմբավորումները և արդյոք պետք է ֆինանսավորվեն: Այստեղ խնդիրն այն է, որ

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

բոլոր կողմանական խմբավորումները հավասար ֆինանսավորում չեն կարող ստանալ և չեն էլ ստանում: Եվ հենց այստեղ էլ խախտվում է իրավահավասարության մոդելը[8]: Ընդհանրացնելով այս ծևաչափի առավելություններն ու թերությունները՝ անհրաժեշտ է նշել, որ, անկասկած, այս մոդելն առավելություններ ունի փոքրամասնությունների քաղաքական ինտեգրման տեսանկյունից:

Ուստիմասիրելով տարրեր երկրներում պատմական տարրեր ժամանակաշրջաններում պետություն-եկեղեցի փոխհարաբերության բնույթն ու ծևերը՝ հանգում ենք մի շարք եզրակացությունների.

➤ Հոգևոր անվտանգության, ազգային ինքնության պահպանման, հասարակության հոգևոր մշակույթի ծևակորման գիշավոր երաշխիքը համարվում է պետական և եկեղեցական իշխանությունների համակարգված ռազմավարություն վարելու պայմաններում, ու, կախված այդ հարաբերությունների բնույթից, յուրաքանչյուր երկրում այդ համագործակցությունն ունենում է յուրովի դրսնորում:

➤ Ինչքան էլ որ ցանկացած պետություն որդեգրի այս մոդելներից յուրաքանչյուրը, կամ տեղավորվի որևէ մեկի տրամաբանության շրջանակներում, այնուամենայնիվ յուրաքանչյուր պետությունում այդ հարաբերությունը դրսնորվում է տվյալ պետության առանձնահատկությունների համատեքսություն: Չորորինակ՝ Անգլո-սաքսոն աշխարհիկ մտածողության դրսնորումներն են «ազգային» եկեղեցիներ ճանաչող պետությունները, ինչպես Անգլիան՝ իր Անգլիկան եկեղեցիով:

➤ Միևնույն ժամանակ պետություն-եկեղեցի-համրություն հարաբերությունների արդյունավետ մեխանիզմները մշակելու համար անհրաժեշտ է ծևակորել ինստիտուցիոնալ, հետազոտական բնույթի կառուցմեր, այսպես կոչված «ուղեղային կենտրոններ»: Համաշխարհային փորձը վկայում է, որ նաև կառուցմերից բարկացած համակարգն ազգային/հոգևոր անվտանգության խնդիրները սպասարկելու համար խիստ անհրաժեշտ է:

➤ Ցանկացած երկրում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների էությունը հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել իրավունքի աղբյուրները, պետության և եկեղեցու միջև կաքված երկկողմանի փաստաթղթերը, բացի իրավական աղբյուրներից, այս հարաբերությունների ուսումնասիրության համար կարևոր է նաև այնպիսի գործուների ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ սոցիալական, քաղաքական, մշակութային և այլն, ինչպես նաև կարևոր է ուսումնասիրել պատմական նախադրյանները, անցյալի փորձն ու ներկայի իրողությունները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Samuel P. Huntington. Remaking of. World. O. 1996. p 78
2. Բրուգեր Յ. Հարաբերությունների պահպան և անհրաժեշտ մասնակիությունը // Հայաստան և աշխարհ. 2009. № 4. стр. 135-143
3. Գասպար Տերտերյան, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները և նոր աղանդավորականներ
http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2485
4. Նոյն տեղում:
5. James E. Wood Jr.J. Readings on Church and State By M. Dawson Institute of Church-State Studies, 1989, p 17
6. Տե՛ս, Գրիգորենկո Ա. ՅՈ. Церковно-государственные отношения в современной России и проблема религиозной свободы и нетерпимости // Вступая в третье

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱԾՈՒ 2017

тысячелетие: религиозная свобода в плураллистическом обществе, М., 2000, стр. 65

7. James E. Wood Jr. Readings on Church and State By M. Dawson Institute of Church-State Studies, 1989:
8. Նոյն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Եկեղեցի-պետություն փոխհարաբերության ձևաչափերը Սիրանուշ Մելիքյան

Պատմական տարբեր ժամանակաշրջանների ընթացքով ու պետական ապարատի ամենատարբեր առանձնահատկություններով պայմանավորված՝ Եկեղեցական ու պետական հարաբերությունները տարաբնոյթ ծն ու ընթացք են ունեցել: Այսօր աշխարհում հոգևոր անվտանգության ապահովումը ենթադրում է Եկեղեցու, պետության, հասարակության ողջ ներուժի օգտագործում: Այդուհանդերձ Եկեղեցի-պետություն փոխհարաբերության մոդելներն ու ծները շատ կարևոր են նաև վերոնշյալ հարցի տեսանկյունից:

Ընդհանուր առնամբ ուսումնասիրելով տարբեր երկրներում Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների կարգավորման օրինաչափությունները՝ առանձնացնում ենք 3 հիմնական մոդելներ՝

- տարանջատված (երբ Եկեղեցին պետությունից գործում է անջատ),
- պետական Եկեղեցու մոդել,
- համագործակցության մոդել:

РЕЗЮМЕ

Форматы взаимоотношений церкви и государства Сирануш Меликян

Ключевые слова: церковь, государство, религия, духовный компонент, сообщество, религиозная безопасность, национальная система ценностей, государственный аппарат, эффективное управление.

Основная цель исследования - выяснить основные формы взаимоотношений государства и церкви, чтобы показать эффективность и особенности этих отношений.

С исторически разных времен и государственных особенностей церковные и государственные отношения избирали разные пути и формы. Сегодня обеспечение религиозной безопасности в мире предполагает использование совокупного потенциала церкви, государства и общества. И все таки взаимоотношения между государством и церковью очень важны с точки зрения выше указанной проблемы.

Анализируя опыт разных государств в сфере взаимоотношений между церковью и государством, мы выделили три модели:

- отделенность церкви,
- государственная церковь,
- модель сотрудничества.

SUMMARY
The Format of Church-State Relations
Siranush Melikyan

Keywords: *Church, state, religion, spiritual component, society, spiritual security, system of national values, state administration, efficient management*

The relations between church and state have had different forms. This process is conditioned by the various peculiarities of state administration and the duration of different historical periods. Today the provision of spiritual security implies the use of the whole potential of church, state and society in the world. Nevertheless, the models and forms of church-state relations are very important in terms of the above-mentioned issue. There are three fundamental models for church-state relations:

- Separated
- Cooperative
- State-church